



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 29

水火既濟

15 ՄԱՐՏ 1908

ԵՐԱՅԵԱՆՈՒՄ ԵՄԻԿՂՃՈՒՄ

95710

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԻՈՂԱԿԱՆ ԲԱՆԻՆԻՍՏԱՆԻ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԷ՛

Գ. ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ.

Պաշտօն-Գործը, Օգոստոս-Պաշտօն հաստատութեան գէտ, թիւ 16

Հատը 40 փարս

(آ. آصادوریان) شرکت صنیعیہ مطبعہ سی — باب عالی جادہ سندھ نومبر ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

4. Պոլիս, Պապը-Ալի ճառսկսի թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
[Վիսկոնսին մեքենաներ
կը գտնուին]

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ գոգոհութեանց եւ առդասկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅՐԱՅՅՈՒՆ ԿԱՅԺ. ՓԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործւածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատան, ինչ:

ՀԱՅՐԱՅՅՈՒՆ ԿԱՅԺ. ՓԱԼԱՏԱՆ

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին.

2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.

2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

1. Սուլթան համամ.

2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԿԻՒՑԱՐ

Չարչը Պօյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիտացող գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:



ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱ-

Թիւրք ազգային, գրական եւ քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 ղրշ. վեցամսեայ 45 ղրշ. գաւառներու համար տարեկան 108 ղրշ. վեցամսեայ 60 ղրշ. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Ձեռքէ վաճառում՝ քաղաք փառա: **ԱՐԵՒԵԼՔ** հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ. ԿԵՐԱՅԻՄԻ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և Դերբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵՒԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագրութեան լաւագոյն Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պօյաճեանի հասցէին, Դալաթիա, Մանուկտի Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին տպարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 29

ՇԱՐԱԹ

15 ՄԱՐՏ 1908

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Եւ եղաւ որ Պանտրմայի դպրոցներուն վարչութիւնը կամ (պաշտօնական բացատրութեամբ) Պատ. Հոգաբարձութիւնը օրին մէկը հաշիւ տեսնէ և իր անտուկն ալ — ինչպէս մեր ամէն վարժարաններու անտուկը — բաց մը ցոյց տայ:

Ի՞նչ ընէ, ի՞նչ չընէ... Կը խորհի, կը չափէ, կը ձեւէ և վերջապէս կ'որոշէ թատերական ներկայացում մը կազմակերպել:

Բայց ի՞նչ խաղ պիտի ընտրէ. — Տիաք ի՞նչ ի՞նչ գուեշքն:

Ասիկա է ահա որ բաւական մտածել կուտայ, բայց ահա օգնութեան կը փութայ իրենց ուսուցիչներէն մէկը որ ամէն բանի խելք հասցնելու մասնագիտութիւնն ունէր: Այս պատուական և բանգէտ երիտասարդը լսած էր թէ Լա Կամիլիա անունը սքանչելի մը կայ որ Պոլսոյ մէջ շատ կը յեղյեղուի, և Մնակեան խումբին, ինչպէս և եւրոպական բեմերու յաջողութեանց առանցքը

կը կազմէ: Զէ՛ մի որ շատ անգամ թերթերու մէջ կարդացեր էր թէ այդ խաղը շատ յուզիչ, տրամաթիգ ու չեմ գիտեր դեռ ինչե՛ր է:

Ու Պատ. Ուսուցիչը որ այնքան բանաստեղծական անուն մը ունի — ըսի՛ թէ Կիթառ կը կոչուի այդ ուսուցիչը —, կը գոչէ. Է՛վրեքա = գտայ...:

— Լա Տամ 0 Գամիլիան ներկայացնենք, Ամէնքը միաբերան հաւանութեան աղաղակներով կ'ողջունեն այս գիւտը...:

La dame aux Camélias! — Ի՞նչ հմայիչ անուն: Եւ այս պատուական մարդիկը ձեռք ձեռքի կուտան, գործը խօսքին միացնելով՝ ճար ճարակ կ'ընեն, բիւսը ձեռք կը ձգեն, դերերը կը բաժնեն, գլխաւոր դերերը յանձնելով է՛ն կարող դասատուներուն:

Մեր պատուական Կիթառը՝ ասպետական շարժումով մը՝ կը ստանձնէ Ժեօն բոքսին դերը. և մեր վարժապետը մէկ ուսումնով կ'ըլլայ Աղամեան մը՝ Առման Տիւլալ մը:

Հապա Մառկոիք Կօթիէն: — Հսած էին որ Մառկոիք Կօթիէն է խաղին գլխաւոր դերակատարը, քնքուշ, նիհարկեկ ու վերջ ի վերջոյ թոքախտաւորի տիպար մը, այդ դերն ալ կը յանձնեն մի ոմն Ե. Ինճէեանի որ մատուց ու փափկակազմ տղամարդ է:

Բէն Տիւվալ կ'ըլլայ Ս. Համբարձումեան
Սեմ Կօսանս՝ Թ. Չէրեան
Վարվիլ՝ Պ. Ճիվէլէկեան
Կասթօն՝ Յ. Տէր Անտոնեան
Կիւսքալ՝ Ա. Գազանճեան
Օլիմբ՝ Ա. Գալեան
Բուխսանս՝ Մ. Ֆրէնկեան
Գօնթ sp Ժիթէ՝ Հ. Ալեանաք
Գօմիսիօնեո՝ Ֆ. Փիլիսոսեան
Նանին՝ Կ. Փաշաճեան
Տօթօր՝ Գ. Փապուճեան
Նիթեթ՝ Գ. Մչիկեան
Արքիւր՝ Յ. Մկրտիչեան

Եւայլն եւայլն եւայլն:

Դերերու բաժանումը այսքան յաջողապէս կատարուելէն ետքը, ա'լ ինչս կը մնար...: Հազուադէպը. — Օ՛հ, ա'տ ալ բա՛ն է. Արման Տիւվալ՝ կարճիկ ճաքէթ մը և նոր կաղապարուած ֆէս մը ձեռք կ'անցընէ. Բէն Տիւվալ՝ ճենճոտ օձիքով ուղտէնկօթ մը, միւսներն ալ իրենց կարգին պահծու հազուադէպ մը կը ճարեն:

Իսկ Մառկոիթ՝ աղուոր պատմա ֆիստան լը, որուն տակ, կուրծքին երկու կողմերը մէյմէկ թաշկինակ կը թխէ, կանացի ստինքներ ձեւացնելով, որով իր հրապոյրը կ'աւելնայ՝ Պանտրմացիներուն բերնի ջուրերը վազցընելու աստիճան. իր այս գիւտը միւս կին դերը ստանձնող պատանիներուն նախանձը շարժելով՝ մէկը իր մեծ մօրը ֆօթօղը, միւսը իր գուզինին փէշը, Նանին ալ Պոլսեցի օրիորդի մը ժիւլք վրան անցընելով՝ Բարեկենդանի կատարեալ ծպտում մը կը ձեւացնեն:

Ուղը յաջողած էր արդէն:

Մանրամասնութիւնը կը պակսի դեռ, ու չենք գիտի թէ այս Տեմաթիւրէ եղած էա

սալ 0 Գամէլիային յաջողութիւնը ո՛ր աստիճան է՝ թատերական արուեստի տեսակէտով, բայց հրատարակուած հատակոտոր քանի մը տեղեկութիւններէ կարելի է հետեցընել թէ Պարտրմացիներուն ճաշակը զանազանութիւն չի դնէր կին Մարկրիթի մը և այդ Մարկրիթի մը միջեւ, թէ՛ խնդիր չէ որ Օլիմբը մանչ մը ըլլայ՝ փոխանակ պչրուհի տիպարով դերասանուհի մը. Բոխտանսը Բոխտանս է միշտ, հոգ չէ թէ մանչու կերպարանքով ներկայանայ և վերջապէս Նիշէթ Միշէթ պեխաւոր երիտասարդին մէկն է եղեր, է՛հ, ի՛նչ կ'ըլլայ: Տիւմանը տղու չըզսըն, կ'ըսէ տաճկերէն առածը:

Դուն ան նայէ որ այս նորեկը զաւեշտատումը, Ա. Տիւմայի գլուխ գործոցը, իր այս տարօրինակ ու խեղաթիւրուած ձեւափոխութեան մէջ Ֆիւռեօն է ըրեր, «արտաքոյ կարգի փառաւորութեամբ» յաջողութիւն գտեր է, այն աստիճան որ հարկ է եղեր բարեկենդանի կիրակի գիշերը կրկնել այս ալլման ներկայացումը:

Ինչ հարկ այդչափ բարակը փնտռելու, Մարկրիթ Կօթիէն և միւս կնոջական դերերը միթէ այդ մարդիկ չեն կրնար կատարել: — Ահա ըրին ալ, յաջողեցան ալ: Այս տեղեկութիւնները Պոլսական թերթերուն հաղորդող մտացի թղթակիցները կը հաւաստեն թէ Պրն. Կիթառ կատարեալ ժէօն բուրմիէ մըն էր, թէ իր քով ճշմարիտ արուեստագէտի ձիրք կայ, թէ բէն Տիւվալի դերը կատարողը հիանալի է եղեր, թէ Մառկոիթը՝ բարիզեան դերասանուհիի մը քնքուշութիւնն ու քնականութիւնը ցոյց տուեր է, ճշմարիտ Կօթիէ մը, գրաւիչ պչրուհի մը, թէ...: Բայց վերջը չի գար աս քեերուն:

Մօնեռն, սեմ Նիյեթի պագ. — «Նպատակն զմիջոցը կ'արդարացնէ», կ'ըսեն: Դըպրոցին ի նպատ 40 ոսկի հասոյթ: Աղուո՛ր բարեկենդան մը՝ շիտակը: Ո՛վ ի՛նչ կ'ըսէ թող ըսէ...:

ՍԻՆԵՍԱԹՕ



Մ Ա Հ

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ Գ. ԷՍԱԵԱՆԻ

Էստեան բարեհամբաւ գերդասանը անմխիթար սուգը կողքայ մահուամբը իր գորովագուր մայր հրեշտակին՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՆՆԱ Գ. ԷՍԱԵԱՆԻ

Աւխարհիս ստեղծմանէն մինչեւ մեր օրերը, ամէն կիւն եակ մայր անունը կրած եւ անցած է այն բովէն՝ զոր Նախախնամութիւնը սահմանած է, զծած է անոր կեանքի տեղադրեալը մէջ. բայց երանի այն մօրը, որ իր կոչումը արդարացուցած կը մեկնի, իր պատշոնը լի ու լի կատարած կը բողբոզուի զաւխտին, եւ բիւր երանի անոր, որ ինզկեմը սիրցուցած ու գնահատուած է թէ՛ Նախախնամութեան եւ թէ համայնեան՝ որուն կը պատկանի :

Ահա այսպիսի չքնաղ եւ օրինակելի մայր մըն էր հանգուցեալ Տիկին Աննա Գ. Էստեան, որուն բարեպաշտ զաւակները իր անմխիթար սուգը կողքան, ինչպէս նաեւ ամէն անոնք՝ որոնք իր գորովագուր եւ մայրենի հոգատարութիւնները վայելած եւ մօտէն գիտակից են իր անզուգական ձիւրերուն եւ բարեմասնութիւններուն :

Իրօք շատ դժուար եւ յոյժ անստուգ պիտի ըլլայ իր բարի յիշակը իր գերդասանին եւ ծանօթներու համար, բայց երբ նկատի առնենք թէ՛ այդ տպարար մայրը իր ետին կը բողբոզուի Ազն. Յակոբ, Կարապետ, Արեակ եւ Հայկ եօթնեաններու ինչպէս նաեւ Օր. Ասէրիկայի նման պատուաբեր զաւակներ, որոնց ամէն մէկը Էստեան անունին փառքը կը մարմնացնեն այսօր :

Յուդարկատուութեան տխուր արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի ժամը 7 ին, Բերա, Ս. Երրորդեան եկեղեցին : Հանդեսին կը Նախագահէր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, շուրջը ունենալով՝ Տ. Գեորգ Արքեպ. Երեցեան եւ Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմախան Սրբազանները, ինչպէս նաեւ բազմաթիւ Վարդապետներ, Քահանաներ եւ Դպիրներ : Եկեղեցին համակ լուսազարդուած էր այս առթիւ եւ ընկուզեմի դազաղը որ կը կենար մէջտեղը մանաբեմին վրայ, ծածկուած էր ծաղկեպսակներով : Եկեղեցական արարողութիւններէն վերջ՝ Սրբազան Պատրիարք Հայրը բեմ ելլելով՝ յուզիչ եւ կուռ դամբանական մը խօսեցաւ, որմէ ետք քափոր կազմուելով՝ դազաղը առաջնորդուեցաւ եկեղեցւոյ բակը, ուր ներկայի իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Էստեան Հարազատներուն եւ պարագաներուն, եւ ուրիշ վերջ՝ նոյն հանդիսատուութեամբ մեղեդական առաջնակարգ կառնով մը փոխադրուեցաւ նաւամատոյց, ուրիշ մասնաւոր շոգեմաւ մը տարաւ Սկիւսար, Ազգային գերեզմանատուն՝ ամփոփուելու համար Էստեան գերդասանին յատուկ դամբարանին մէջ :

Խմբագրութիւնս խորապէս զգածուած այս դառնակսկիծ մահուան առթիւ իր խորին ցաւակցութիւնները կը փութայ յայտնել՝ Ազն. Յակոբ, Կարապետ, Արեակ եւ Հայկ եօթնեաններու, ինչպէս նաեւ Էստեան բարեհամբաւ գերդասանին բոլոր պարագաներուն :

ԽՕՍՔԵՐ ԱՌ ՖԻՖԻ

Մեծ պահքի առաջին օրը, առաւօտեան ժամը մէկին, դեռ անկողնէդ դուրս չես ցատկած, ծո՛ղ աղջիկ:

Ի՞նչ տոմոյն այտեր են ատոնք և ի՞նչ կապուտածիր աչքեր . . . :

Ջերմ կայ երակներուդ մէջ, փոթորիկ մը սրտիդ և գլուխդ տեղը չէ, ահա ինչու կառչած կը մնաս սաւաններուդ, կամքը խոյս կուտայ քննէ, ուժաթափ է մարմինդ, յուլաբար կը տապալկիս և մեղկօրէն կ'երազես:

Վերջի երկու շաբաթուան կեանքդ կ'ուզէիր որ յաւիտեան երկարէր, կը հասկնամ, Նինի:

Երեկոյթներու մէջ յաղթանակող դիցուհի, տակաւին չես յափրացած ծաղկատի հասակիդ և չքնադագեղ հրապոյրներուդ հանդէպ երգուած պաշտամունք մեղեդիէն, դեռ վալսի մը եղանակը ականջիդ մէջ է, էութիւնդ ցնցող և քսան տարիներուդ հարստութիւնը գգնող երկու գաւաթ շանքանիայի միջև արտասանուած բառեր կան հոգիիդ մէջ միտած որ չես կրնար մոռնալ և տագնապներու այս ամենէն անուշին մէջ, թեւդ գլխիդ տակ կը դնես, կը գոցես այդ աղւոր աչքերդ և կը խոկաս:

Սենեակիդ մէջ ամէն բան քու հինգեւտասնօրեայ կեանքիդ պատմութիւնը կը յօբինեն և անգաղտնապահ փութկոտութեամբ մը քու յաջողութիւններուդ վրայ կը խօսին:

Սա աթոռին վրայ նետուած չըջագեցած քու աղւոր մարմնոյդ կաղապարը կը կրէ տակաւին, քորսածդ որ գգլխի բոյրեր դուրս կուգան, հպարտ ըլլալ կը թուի իր մէջ պարունակած ըլլալէն դեռաբոյս գանձերը քու կուսական, հիմնալի ուսերուդ, անդուսէ նրբամուճակներդ իրենց յոգնած վիճակին մէջ՝ նորէն ցոյց կուտան պզտիկութիւնը ոտքերուդ որոնք գոգցես թեւեր կառնեն երբ թիթեռի նման կը պարես, անկիւն մը նետուած ճերմակ ձեռնոցներդ կարծես նախանձոտ աչքով մը կը նային քու քնքուշ ձեռքերուդ շուշանաթոյր սպիտակութիւնը և կը նախանձին անորմէ, կուրծքդ վարսահած կայքեկդ, այդ խաւաքարտի նուրբ կտորը որ

տոկալ գիտցած է առնական այդքան յարձակումներուն, տարի մը ամբողջ պահել կը խոստանայ քեզի յիշատակը ամէն անոնց որոնք քու թեւդ խնդրեցին փոխանակ . . . ձեռքիդ, — թերեւս այդ օրն ալ ուշ չէ, Ֆիֆի — հոս հոն ինկած ծաղիկներ կամ խամբած քամէլիաներ որոնք այնքան կեանք ունեցած են որքան կ'ունենան խոստումները երիտասարդներուն, գիշեր մը միայն:

Այդ մամուռքէ չարչարող գլխուդ մէջ տեղաւորել չես կրնար բոլոր յիշատակները, աղւոր երեկոյթներուն, գինովցնող երաժշտութեանց, գունագեղ արդուզարդերու, վրդովիչ Ֆլորէներու, սիրային բոցավառ յայտարարութեանց, գրաւիչ վալսերու, աղմուկալի դիմակաւորութեանց, ապշեցուցիչ խենդութիւններու և այն ամէն աղւոր խաբուսիկ բաներուն որոնք քիչ տեւեւուն համար անուշ երազի մը հրապոյրը կը թողուն քո անփորձ մտքիդ մէջ:

Անշուշտ չես կրնար մոռնալ անցեալ գիշերուան պարոնին ձեռքի սեղմումները, միւսին՝ սրահին մէկ անկիւնը ականջդ ի վար փսրացած déclaration, միասին խմուած փոփրացող շամբանիային գաւաթները, և իրարու վրայ կերուած կաղաւթի սաճումիչները:

Ինչպէս միտքդ չեկան փէշերուդ չուրջը դարձող երիտասարդներուն complimentները որոնք աչքերուդ աղւորութիւնը, թեւերուդ յղկունութիւնը, մազերուդ գոյնը, ուսերուդ ճերմակութիւնը և մարմնոյդ շնորհները կը գովէին, կերգէին, կը փառաբանէին:

Այդ քու աչքերդ մանաւանդ, — ըսող չեղաւ քեզի — որոցմէ դուրս կը նային միտքդ ու հոգիդ, իրենց յիշող ակնարկներով, արդեօք որքան սրտեր պղտորեցին, քանի հոգիներ ծակեցին . . . :

Մի փորձեր, Ֆիֆի, գաղտնիքդ պահելու: Այլ կան մը չթիւները կրնան ոտել, բայց աչքերը երբէք: Ինչ ներսիդիդ կրակին կայծերը աչքերէդ դուրս կը ցայտեն, անոր համար այնքան աղւոր են անոնք:

Եւ հիմա, որ ատոնք անցան գացին, անոնց յիշատակովը ընկճուած, մըջունի խայթոցներ կզգաս՝ վերնամայիկդ տակ, համբոյրներ կան որ չթիւնքներուդ եզերքը կը

դեպքերին, և մասոններդ գգուանքներ կը փնտռեն, սիրոյ ծարաւ մը սրտիդ խորը, երեւնալու, փայլելու տենջ մը մտքիդ մէջ, ահա հոգեկան վիճակդ այս առտուան որ կապուածի՞ր աչքերէդ կ'երեւայ ինչպէս նաեւ դալկահար դէմքէդ: Եւ սակայն դարձեալ աղւոր ես Ֆիֆի, մաղերուդ այդ խառնաշփոթ վիճակին, թեւերուդ այդ անզարդ մերկութեան և կուրծքերուդ համարձակ ելեւէջին մէջ, աւելի աղւոր ես, Ֆիֆի, քան ինչ որ էիր երեկ գիշեր հայելիիդ առջեւ, պարտահանգէսի համար մեկնած պահուդ:

Եւ որովհետեւ աղւոր աղջիկները բարի ալ կ'ըլլան, թող տուր ինծի վեր առնել մահճակալիդ վարագոյրին մէկ ծայրը և խօսիլ քեզի հետ այն պատկառանքով՝ զոր մարդս քրոջ մը համար կ'ունենայ:

Ֆիֆի, Ֆիֆի, տե՛ս ինչ աղւոր է արեւը որ փեղկերուդ եզերքներէն ներս կը սպրդի բնութեան համբոյրը քեզի բերելու համար: Ե՛լ նստէ և մտիկ ըրէ ինծի:

Մոռցիր, հոգիս, այն ամէն վաղանցիկ դբօսանքները, խենդութիւնները և ղուարձութիւնները, որոնցմով զբաղեցար տասներհինգ օր շարունակ:

Ամփոփումի, հանգարտութեան, մտածելու ժամն է այլեւս:

Հերիք որքան ուրիշներու համար ապրեցար, ուրիշներու համար փայլ տուիր ինքզինքիդ, օտարներու պատկանեցար, ուրիշին հաշտոյն ժպտեցար և ուրիշին հաճելի երեւնալու համար զարդարեցիր դու զքեզ:

Գովասանքէ, complimentէ, խնկարկուած թենէ խմորուած այն միջնորոտը ուր երկու շաբաթ ապրեցար, հիմ չունի, կեղծ է, և արուեստակեալ:

Սուտը՝ չողոքորդութեան խառնուած, կեղծիքը թեւ թեւի անբարոյականութեան հետ վայրկեան մը չփոթեցուցին քու երիտասարդի անփութութիւնդ, մոլորեցար պահիկ մը և կարծեցիր թէ կեանքը ուրիշ բան չէ բայց եթէ յաջորդութիւն մը երգերու և պարի, կերուխումի և երաժշտութեան, արդուզարդի և պատահական սիրաբանութեանց: Ուստի թող տուիր որ դարպաս ընեն քեզի, դո՛ւ մնացիր երբ ըսին թէ՝ հուրիի հասակ մը աւնիս, ժպտեցար երբ մէջքդ քիչ մը աւելի

սեղմեցին, գոհ մնացիր երբ — աղւոր ես — ըսին քեզի և խելքդ կորուսիր երբ ամենէն համարձակը և ամենէն լկտին երիտասարդներուն, գինիին ազդեցութեան տակ — քեզ կը սիրեմ — ըսաւ բերնի ամենօրեայ սովորութեան մը հետեւանօք, և ճիշդ այն շեշտով՝ որով քեզմէ առաջ տասը աղջկան ըսած էր միմիայն այդ գիշերը:

Պատրանք այս ամէնը, Ֆիֆի, և երազ՝ որ գիշեր մը միայն կը տեւէ և որ սակայն կուգես աւելի երկարել, աչքերդ գոցելով և ընկողմանած փետուրէ բարձիկիդ վրայ:

Մոռցիր այս ամէնը, Ֆիֆի, և մի մտածեր անոնց վրայ, միայն այնքան կարեւորութիւն տուր անոնց՝ որքան տալ պէտք է վաղանցիկ, յեղյեղուկ բաներու: Կեանքը նւելի լուրջ, աւելի պարկեշտ, աւելի հաստատուն պահանջներ ունի: Ոչ ծաղիկները, ոչ տանութէնները և ոչ ալ մետաքսները կուտան մեզի այն երջանկութիւնը, զոր ամէնքս կը փնտրենք:

Աւելի կենսական, աւելի դրական զբաղումներու տուր ինքզինքդ և ջանա մնայուն առաքինութիւններով օժտել դու զքեզ արժանի ըլլալու համար այն մեծարանքին զոր մենք էրիկ մարդիկս կը պարտինք ճշմարտապէս բարի կիներուն, և այն աղջիկներուն որոնց հրապոյրն երեկոյթներէ դուրս ալ, պարզ կեանքին մէջ ալ փայլ ունի: Կէս օր է, Ֆիֆի, դուրս եկուր անկողնէդ:

Ուսերուդ վրայէն թոթուէ ծուլութիւնը, չփէ աչքերդ, խաչ հանէ երեսիդ և մտիւր նորէն այն կեանքին մէջ՝ որ էն գեղեցիկն է, աշխատութեան կեանքը, բարութեան կեանքը, կեանքը հաւատքի, իմաստութեան և յոյսի:

Յ. ԱԼՓԻՍԻ

ՄԱՔՐԱՍԵՐՆԵՐՈՒՆ

Ամէն անոնք՝ որոնք անուշ ջուր, տաք միջնորոտ, մաքուր սպաս, և կոկիկ սպասարկութիւն կը փնտռեն բաղնիքի համար, միմիայն կը յանձնարարենք Սկիւտարի Ալթուներգատէի բաղնիքը, որուն նորոգութիւնները աւարտած ըլլալով՝ ամէն օր ահագին բազմութիւն մը հոն կը դիմէ լուացուելու համար: Սկիւտարցիներուն աչքը լոյս, օգտուեցէք առիթէն:

ԿԱՎՌՕՇԱՊԱՏՈՒՄ

ՄԵՐ ՍՄԱՍԸ

Նշանաւոր մահկանացու Սմբատ Քէսէճեանի կեանքին մէջ մեծ փոփոխութիւն մը եղած է սա միջոցին:

Մինչեւ այսօր ամէն ինչ էր անիկա, թմրկահար, թրօնպօնիստ, նուագապետ, յօդուածագիր, օրկանիսդ, պարի դասատու, էնքրէզօդիս, Ղալաթիոյ ժամուն դպրապետին օգնական, կեանքի, հրդեհի, անասուններու, շոգենաւներու և բոլոր ապահովագրութիւնք բաներու ապահովագրիչ, թերթերու թղթակից և գործակալ, դիմացը ելած մարդուն գործակատար, Չուհաճեանի արձանին կանգնուածին ձեռնարկիչ, Իւնիօն-Ֆրանսէզի նուագահանդէսներուն դրամահաւքիչ, նպաստ տուող դերասաններու աջ թեւը և ձախ ոտքը, Տիրան Գասպարեանի պոլսական guide, եւայլն եւայլն...

Եթէ հարկ ըլլայ նշանաւոր մահկանացուն ինքուր արուեստները, գործերը և տիտղոսները մի առ մի նշանակել, Համբազիսալի ամբողջ մէկ թիւը նեղ պիտի գար:

Բայց Սմբատ Քէսէճեան մինչեւ այսօր... երգահան չէր միայն և ասիկա ցաւ կը պատճառէր իր միջազգային սիրտին, որ ամէն մարդու համար կը բարախէ հաւասարաշափ:

Իր պրոֆըսոր տեղը գնաց հիմա սակայն և կրնայ հանգիստ սիրտով միտնիլ ասիէ վերջը՝ առանց աչքը ետին մնալու, թէիւր բնաւ բաղձացող չլի իր մահուան, որովհետեւ երկու հրեշտակներ ունի որոնք իրիկուան հայրիկին գալուն կը սպասեն:

Սմբատ Քէսէճեան երգահան ալ եղաւ իր Ֆլոր Տ'Օրանձեով, որով կրնայ իրաւամբ պաշտօնակիցը հռչակել ինքզինքը բաց ճակատով՝ Մասրնէի, Սէն-Սանսի, Մաուգասիի, Վէրտիի, Տանիժէթիի, Գլէօն Գալպուօի, Բուչչինիի և ... Մարլեանի:

Հիմա երբ Սմբատ Քէսէճեան ուզէ խօսիլ այդ մեծ երգահաններուն վրայ, կատարեալ իրաւասութիւնը ունի ըսելու.

— Երէկ սիրելի պաշտօնակիցիս՝ Սէն-Սանսի մէկ օրէրան տեսայ ...

— Յարգելի պաշտօնակիցս Մասրնէէ խընդրեցի որ ...

— Մեծայարգ պաշտօնակիցս Մարլեան իր յարգելի պաշտօնակիցը եղող Բուչչինիէն հիացողական նամակ մը ստացեր է ...

Որովհետեւ հիմա ի՞նք ալ ճիշտ անոնց նման երգահան է, ո՛չ աւելի, ո՛չ պակաս:

Եթէ անոնք օրէրաներու սէնֆօնիներ չի նած են, փառք Աստուծոյ, ինք ալ բոլքաւ մը չինեց ... Նարնջածաղիկներ — Fleurs d'Oranger. —

Խա՛չ որ, միմիայն Սմբատ Քէսէճեան ըլլալու է, ասանկ բանաստեղծական անուններ գտնելու համար:

* * *

Ուրիշ փոփոխութիւն մըն ալ եղած է Սմբատի կեանքին մէջ, խոշոր, անագիւն փոփոխութիւն մը, զոր կարելի չէ չնշանակել ի. դարու պատմութեան մէջ, որովհետեւ Սմբատին դէմքը այլ եւս ո՛չ լուսանրկարիչ Սիմոնին կը պատկանի, ո՛չ ալ Ֆէպիւսին, այլ շիտկէ չիտակ ... Պատմութեան:

Մինչեւ այսօր մենք Սմբատը կը ճաննայինք իր պայուսակով, իր անբաժանելի դեղնած, քիչ մը պատուած, ու թօշնած պայուսակով, զոր ամէն օր և ամէն վայրկեան թեւին տակը կը պահէր՝ ծնած օրէն թերեւս:

Սմբատ և իր պայուսակը, պայուսակը և Սմբատ ...

Առանց մէկին չի կար միւսը, ինչպէս որ առանց հոգիի չկայ մարդ:

Այդ պայուսակին մէջ ամէն ինչ կար, ապահովագրութեան բօլիսներ, ներկայացումի տոմսակներ, հաշիւներ, յօդուածներ, իր պղտիկին չորը և նոյն իսկ հինգ փարայի հացով հինգ փարայի պանիր ...

Այդ պայուսակը նոյն ինքն Սմբատ Քէսէճեանն էր, և սիրտի կարծէիք որ Սմբատ

Քէսէճեան ամէն տեղ իր այդ պայուսակովը կ'երթար, նոյն իսկ անկողինը, նոյն իսկ հոն... ուր մարդիկ սովոր են ճարձկուած պղտիկ թուղթերով մը երթալու միայն:

Մինչեւ այսօր չէ պատահած նոյն իսկ անգամ մը որ Սմբատը տեսնեմ առանց իր պայուսակին:

Շատ անգամներ հանդիպած եմ իրեն առտուան դէմ և պայուսակը միշտ թեւին տակն էր, շատ անգամներ տեսած եմ անոր բաղնիք երթալը և միշտ պայուսակը ունէր թեւին տակ, որ այս անգամ հաշիւի և թուղթի տեղ՝ մաքուր վարտիք-շապիկ կը պարունակէր:

Բայց, անցեալ օր առաջին անգամ ըլլալով...

Ականջնիդ աղէ՛կ բացէք, որովհետեւ պատմական մեծ եղելութիւն մը պիտի յայտնեմ ձեզի...

Անցեալ օր առաջին անգամ ըլլալով մեր Սմբատը տեսայ առանց իր պայուսակին:

Պահ մը չհաւատացի աչքերուս:

Պայուսակին տեղը անցուցած էր կոշիկներէն:

— Անցած ըլլա՛յ, ըսի տխուր շեշտով մը, պայուսակդ ի՞նչ եղաւ, մեռա՞ւ, թէ գողերը գողցան:

— Ձե՛, պատասխանեց նշանաւոր մահկանացուն, բայց ասկէ վերջը այս ծրարով պիտի պարտիմ:

— Մէջը ի՞նչ կայ այդ ծրարին:

— Ֆիօր s'Orանէս:

Խեղճ նարնջածաղիկներ, որոնք ատենօք գեղատի կոյսերու գլխուն վրայ կը դրուէին և հիմա... Սմբատին թեւին տակը մտեր են:

* * *

Իրօ՛ք, քանի մը օրէ ի վեր, Սմբատ իր ծրարովը կը պտըտի ամէն կողմ, Պոլիսէն մինչեւ Շիրի:

Դիմացի մայթին վրայ, հեռուէն ծանօթ կամ անծանօթ դէմք մը նշմարելուն պէս, նետի մը նման դէպի հոն կը ցատկէ և անմիջական չարժուով մը ծրարը քակելով և արհեստական ժպիտ մը փակցնելով պիտեբուն տակը, կ'ըսէ.

— Իմ հեղինակութիւնս է, Ֆիօր s'Orանէս, հաճեցէ՛ք ընդունիլ...

Ու երբէք չի մերժուիր, որովհետեւ ի՞նչ պէ՞տ կարելի է Սմբատը մերժել:

— Տասը հատ միայն մնաց, կ'աւելցնէ շէնշող՝ առանց որ իրմէ այս տեսակ սուտ մը պահանջող ըլլար:

Անդիէն կը նշմարէ ուրիշ մը, որու մասին կը կասկածի թէ տուներ դաշնակ մը կայ.

— Սմբատ անոր քովն է անմիջապէս.

— Հաճեցէ՛ք ընդունիլ իմ բօլքաս:

— Ինտո՞ր կ'երթայ կոր, կը հարցնէ միւսը հետաքրքիր, շատ ծախեցի՞ր...

— Ո՛ւրկէց, կը պատասխանէ Սմբատ՝ խորապէս յուսահատ շեշտով մը, մերինները արուեստը չեն քաջալերեր, դեռ քսան հատ հազիւ ծախեցի...

Բայց այս միջոցին քովէն կ'անցնի մէկը, զոր Սմբատ կը կարծէ ճանչնալ.

— Հաճեցէ՛ք բօլքաս ընդունիլ, կ'ըսէ Սմբատ:

— Ես դաշնակ չեմ գիտեր:

— Հարկաւ ջութակ վարենի գիտէք:

— Ջութակ ալ չեմ գիտեր:

— Մանտօլին, կիթառա՞:

— Դժբաղդաբար ո՛չ մէկը:

— Բայց տիկինը անշուտ գիտէ հնարիւման մը...

— Տիկինն ալ չի գիտեր:

— Բայց աղջիկնի՞դ...

— Աղջիկս վեց ամսուան է տակաւին:

— Ձեր պալսըզը...

— Չունի՞մ:

— Ձեր զոքանչը...

— Ան ալ չի գիտեր բռն մը:

— Ուրեմն իմ հեղինակած բոլքաս չպիտի ընդունիք հիմա, կը հարցնէ Սմբատ ա՛յն պիտի վաւերացնեմ որքան յուսահատ շեշտով մը, որ գիմացինը.

— Պիտի ընդունիմ, կը պատասխանէ, հոգդ մի՛ ըներ, հրը վեց ամսուան աղջիկս մեծնայ, այն ժամանակ դաշնակ պիտի սովորի, հարկաւ քու բոլքադ ալ պիտի փափաքի զարնել:

Ու Սմբատ, մեր անմահ, բարի, իշխուզար Սմբատը, կը շարունակէ իր ճամբան՝ ամէն օր հետիտան Կ. Պոլսոյ չըջնը ընելով և իր բոլքան ծախելով:

* * *

Մի՛ կարծեր որ Սմբատ, վրադ խնդալու համար գրեցի այս տողերը:

Գիտեմ որ Միրիկ Պարսամունէն չա՛տ աւելի սրամիտ ես՝ գրչի կատակներէս առնուելու աստիճան պատուելի չըլլալու համար:

Ապա թէ ոչ գիտե՛ս թէ ո՛րչափ կը հիւսնամ քու տաղանդիդ, և եթէ վաղը սկսիմ նոյն իսկ քե՛նէ բոլքայի դաս առնել ... քո՛ւ բոլքադ պարելու երջանկու թիւնը ունենալու համար է լոկ:

ԵՐՈՒԱՆԴԻ ԹՕԼԱՅԵԱՆ

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

ԱԶՆ. ՕՐ. ԱԶՆԻԻ ՅԱՆՅԻՆԵԱՆ
ԱԶՆ. ՅՈՎՀԱՆՆԵՍԻՍ ԷԺ. ԳԱՅՍԷՐԵԱՆ
ՆՇԱՆԱԽՕՍ

Մեր անգուգական առաւօտեան Հայա-
քերթին՝ Մանգուլիի Տեր-Տնօրեան Ազն. Յով-
հաննէս Էժ. Գայսերեան, որ որչափ ծա-
նօթ իր տալար քերթով՝ նոյնքան սիրուած
դէմք մըն է մեր համայնքին մէջ: Մանգուլի՝
առաջին քիւնէ մինչեւ այսօր իր հասցնիս
պարունակութեամբը եւ ե՛ն ուժեղ տարբերով
կազմուած խմբագրական մարմինին նոյն այդ
քերթին օտուր համախմբելը մշտնջեն է գոր-
ծին լիովին գիտակցութիւնը ունեցող եւ զայն
վարելու կարողութեամբ օժտեալ մէք մը՝ ինչ-
պէս Գայսերեան Էժանքին: Վերջին անգամ
զուտ գրական հանգեսին՝ ԼՈՅՍԻ, հակառակ
այդքան նոյն պարունակութեան մէկ դրուժի
անհաւատարմի գինը, զօրավիմն է սա պայ-
ծառ նշանակութեան քէ՝ Գայսերեան Էժ. իր
անձնական շահերը միշտ կը զոհէ հանրութեան
օգտին եւ գրական բարգաւաճման: Իսկ Օր.
Ազնիւ Տանձիկեան իր անունին տէր՝ ազնիւ
ձիրքերով օժտեալ կիրք օրիորդ մըն է, ապա-
գայ Տան Տիկիքի մը բոլոր առաւելութիւն-
ներով խմորուած:

Հանրագիտակ ջերմապէս կը շնորհաւորէ իր
աւագ պատճառակցը եւ երկնային երջանկու-
թիւն կը մաղթէ նորակապ խօսեցեալներուն:

ՄԻՐԵՄ ՏԵՍՆԵԼ ԿԱՄ ԼՍԵԼ...

— Եւաի թոռնուհի մը, որ քալած ա-
տեն կը պարէ:

— Օրիորդ մը, որ միշտ սիւսբանսիոնով
կը խօսի... ինծի հետ:

— Քառէ տէօթէ նաղելաշուք մը, որ
սուառէի մը մէջ չիֆթի քիլի կը խաղայ:

— Տիկին մը կամ օրիորդ մը, որ Լիւա
(բարի) ծաղիկը կը կրէ կուրծքին վրայ:

— Հանրագիտակի Զիւրեհօր ընկը:

— Հայլայի հարսնիքի մը մէջ ճաշասե-
ղանին վրայ կարմիր խավեար դառնուիլը...
սեւի տեղ:

— Պուլիլի սիրուն օրիորդ մը, որ, Ման-
գուլիի չարախօս օրերուն չորրորդ երեսի՝ Մո-
լիէսի, ձագուկին ընկերակցութեամբ թատրոն
կ'երթայ... բերնիս ջուրերը վաղցնելով:

— Զարգացած ուհի մը, որ սօսիքի
մը մէջ աղըզը խով սիկառ կը ծխէ:

— Զարաճճի կին մը որ ձեռնոցին մէկը
կը ձգէ ճամբան, զայն վերցուցած ատեն
զինքը հետապնդող երկասարդին դառնալ
նայելու համար: (Պաւլօ կնիկ, ատ խելքը
պիզիսէնէն առիւր, թէ էրիկը չարէիքն բե-
րաւ):

— Շիք օրիորդ մը, որ իր գործին չեկած
կամ չհաւնած բանի մը համար «Աման դուք
ալ, ատ ալ խըյախ մէկ բանս ըլլար» կըսէ:

— Արտայայտիչ, խոհուն, խօսուն սեւ
աչուկներով հուրի մը, որ երկու երեք սի-
րային ոտանաւոր գրած ըլլալուդ համար
«Պաշտի բանաստեղծ» կը կոչէ քեզ ... այ-
սինքն զիս:

— Նօնօշիկ Բեռօթուհի մը, որ նիհար-
նալու համար, օրը քանի մը անգամ Շիլի-
էն մինչեւ թիւնէլ ոտքով կելլէ կիջնէ:
(Արդեօք յիշեալ օրիորդը չ'ը գիտեր թէ հի-
մակուան երկասարդները անպատկառօրէն
միտին իւզոտը կը փնտռեն):

— Եւ... վերջապէս կը սիրեմ տեսնել ին-
ծի պէս խլէզ մը, որ թացիկ թացիկ կինե-
րուն բէշերէն չգատուիր եւ անոնց որ կող-
մէն որ ըլլայ խածուկ կը դընէ... բայց միայն
Հանրագիտակի այս էջերում եւ ոչ այլուր:

ՎԱՀՐԱՄ ՍՐԿԱՅԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՖԷՐԻՏ ԷՖԷՆՏԻ ԳԱՅՍԷՐԵԱՆ

ԳԱՅՍԵՐԵԱՆ-ՏԱՆԶԻԿԵԱՆ ՆՇԱՆՏՈՒՔ

ՄԵՐ ՇՆՈՐՀԱՌՐՈՒՄՆ

ՈՒ

ԽՆԴԱԿՅՈՒՄՆ

Ազնուական ու Պառնակուն Բարեկամդ
իմ ու ամենուն.

Տիար Տիար Յովհաննէս Գայսերեան
Ֆերիտ Էֆենտի

Տէր-Տնօրէն Մանգումէ ժողովրդական Օրաբերքին

Խանդավառ համակրանք, բերկրապա-
րար հրճուանքով ու ծափահար խնդակցու-
թեամբ, ժողովուրդի չափ բազմաթիւ Բա-

րեկամացդ, Մանօթացդ, Ընթերցողացդ ու
Ընթերցողուհեացդ հետ, կ'ընդունաւորեմ և
ես թարեքախտ ու երջանկաբեր ՆՇԱՆՏՈՒՔԻ:

Մարդկային կեանքն առաւօտող օրերէն
ո՛չ մին այնքան աւելի փառաշուք, խորհր-
դաւոր ու նշանակալիւր է քան օրն այն հան-
դիսաւոր՝ ուր, երիտասարդը՝ նշանած, երի-
տասարդուհին՝ նշանածուհի, կ'փոխանակեն
մատնին մատնէ մատ, որպէս հոգին կ'փո-
խանցի մարմինէ մարմին, և սիրտը՝ կուրծքէ
կուրծք:

Նշանուիլ՝ նշանաւորուիլ է:

Մարդուն մէջ կ'սկսի բուն կեանքն անոր
նշանուելու օրէն: Վա՛յ անոր որ կ'նշանուի
ու կ'թողուի: Նշանութեամբ հոմանիչ է ան-
պատուաբեր, անարգ ամուսնալուծումին:

Յորչափ կեանքը կ'նշանակէ ծնիլ, ապրիլ

իր նմանին առաջ բերել, տալով անոր ազնուացում մը, զարգացում մ'աւելի քան որ ունէր արդէն, յաւելլու համար նոր ու հզօր օղակ մը՝ ցեղին ու սեւին մշտնջենութիւնն հոլովող, յարատեւող գոյութեան շղթային, որ կ'սկսի Արարածէն, յանգելու համար առ Արարիչն, ժարդէն առ Աստուած և մեր կեանքէն դէպ յաւիտեան, կազմելու համար մասն անհունին, որպէս կ'կազմէ շիթն՝ ուղկէանին, հիւլէն՝ տիեզերքին ու նշոյլն՝ արեւուն գոյութեան տարին անհրաժեշտ:

Նշանը Պսակի Տաճարին նախագաւիթն է, Հարանիքին նախատօնակն ու ամուսնական կեանքի աղիկամի ու անկաշկանդ դաշնադրութեան նախապայմանը, ինչպէս և մարդկութեան հիմն ու կորիզը կազմող ընտանիք գերդաստանին նախասնեակը, ուր չ'մտնող բանական երկոտանին անարժան է Մարդ Տիտղոսին:

Նշանածին մէջ կ'ընակի կեանքն այնքան կոյս՝ որքան ծաղիկը՝ կոկոնին մէջ, այնքան պայծառագեղ՝ որքան արշալուսին մէջ՝ արփին, այնքան համեղ՝ որքան խորիւխը՝ մեղրին մէջ, այնքան անոյշ՝ որքան բոյրը խուսկին, չունչը՝ զեփիւռին մէջ, այնքան բանաստեղծական՝ որքան նուագն՝ քնարին ու ձայնը՝ սոխակին մէջ, այնքան սիրելի՝ բիրն որքան լուսոյ լիճ ակունքին մէջ, որքան սրբազան՝ աղօթքին մէջ, Հաւատքն ու իր հանգանակ, այնքան ապագալիր ու արգասաւէտ՝ որքան Հանճարին մէջ՝ գիւտն ու հրնարքն, և մանկան մէջ՝ ծնողքն արարչատիպ:

Փափաքելով, — հաւատալով ալ — թէ աւելի քան զոր մենք գիտենք, գիտցող, գնահատող էք նշանածական կեանքին բազմիմաստ, բազմերանգ ու բազմադէմ խորախորհուրդ նշանակութիւնն ու թանկարժէքն անոր, կ'մաղթեմ որ՝ նշանածի երանութեան դրախտի սեմին վրայ մնաք իժի փորձանքէն անպատրելի, որպէս Յիսուս անապաւին մէջ

մնաց սատանին փորձանքէն անպարտելի: Բարոյական ու նիւթական բոլոր ուժերուն մէջ հանճարն է յաղթական, Ձեր գործունէութիւնն հերիք է որ ըլլայ հանճարեղ:

Որպէս վերեւ բացատրեցի, նշանաւորն է մուտքն ամուսնութեան, և հաղորդումն անոր սրբազան խորհրդոյն:

Նշանուեցաք Շնորհուրթի Օրիորդ Ազնիւի հետ, ու ասով Տանձիկեան ընտանիքն ալ պատուաստեցիք Գայսէրեան ընտանիքին հետ, սիրոյ յօդովն ու զօդով՝ չաղկապած:

Ձեր Նշանաւոր պատահեցաւ տարւոյն բոլոր եղանակաց յեղունիներն իր մէջ համառօտող, քաջամարտիկ պայքարող Մարտ ամսուն, և Մեծ Պահոց այն շատ խորհրդաւոր ու առակաւոր կիւրակէին, ուր հովիւն իր մոլորած ոչխարը, կինն իւր կորուսած դրամը կ'գտնէ, Հայրն ալ օտարութենէն վերադարձող զաւակն ողջագութելով, խանդաղատօրէն անոր պատարագ կ'զենու պարակ զուարակը:

Նշանաւոր ու խորհրդաւոր օրուան զուգադիպող Նշանածնե՛ր. օրը նշանաւորող ու խորհրդաւորող ոգւոյն պէս, մնա՛ք և Դուք Ձեր կեանքի պայքարող բոլոր յեղունիներուն մէջ նոյն անյեղին, կեանքին բոլոր կորուստները վերգտնող, և ամէն հեռաւորութեանց ու օտարութեանց մէջ նոյն անզատչելին իրարմէ, և զիրար ընդմիշտ ողջագութող:

Այժմ Շնորհաւորելի Նշանած, ընդ հուպ ըլլաք ներքոյիւի Հարսն ու Փեսան, հանդիսանաք աիլուսիպար ամուսիններ, կազմելու ընտանիքն ընդօրինակելի ու նախանձելի: Ծըլ՛ք, ծաղկի՛ք, մէկ բարձի վրայ ծերանա՛ք, լինելով դերերջանիկ ծնողքը, հայրն ու մայրն ողղւով ու քոռամբք բերկրեալ:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Արսնասէր ՀԱՆՐԱԳԻՏԱԿ Լրագրին



ԲՈՒՍԻՆ ԳԻՇԵՐԸ

[Շար. նախորդ քիւհն եւ վերջ]

Սկիւտարցիին՝ որ սովորութիւն ունէր ժամը գիշերուան երկուքին վերմակին տակ մըտնելու, նուազ լսելու համար իր շուրջը բոլորով ու տղապոլ կանացի չպիտոյ բամբասանքը, բան մը որ Սկիւտարցի կնոջ յատկանշին է, հիմա, ճիշդ այդ ժամուան, պուստրոններու ալքուհոտ մթնոտին մէջ արեւդաթողի է՛ն տաք կեանքը կանցնէր շրջապատուած գիւղացիներէն, դրացիներէն, Ամէն ոք գլխէ ելած էր այդ իրենկունը պէտք է ըսել, ամէն հայր ամուրի հովառսա մը և ամէն երիտասարդ, սպանդանոցէն փախած խենդ կովերն էր դարձէր (ներեցէք նմանութեան)։ Փողոցները Սկիւտարցի, ճաչարանները Սկիւտարցի, քարեջրատուններու մէջ Սկիւտարցի, և վերջապէս ... տուներու մէջ Սկիւտարցի, պանդոկները Սկիւտարցի։

Երեկոյեան մինչեւ ժամը կէսը ամէնուն գէմքը սալորի պէս թթու երեւոյթ մը ունէր, և չեմ գիտէր ինչու նոյն գէմքերը գիշերուան ժամը երկուքէն վերջ անուշ իլիմոնի փոխուեցաւ։ Սրանտիտը պարապ աթոռ մը չիկար և ոչ ալ իզմիր օթէլին պարապ անկողին մը։ Այս առթիւ սա ալ չի մոռնանք ըսելու որ, անոնք՝ որոնք իրենց սպանդանոտ սալան ու վերմակին վարժուած էին, այդ գիշերը *faute de mieux*, Նիքօլաքիններու և կամ միւսիւ Պաթիսթներու քրտինքին կծու *parfume* հոտոտեցին մինչեւ լոյս այն անկողիններուն մէջ, զորս հազիւ հազ գտան օթէլներու թափան առաւին։ Բայց ինչ և է, մենք դառնանք մեր նիւթին և չարունակենք նկարագրել Մերկէլ աղային գլխուն եկածները այն կետէն որ ձգեցինք նախորդ շաբթու։

Մէրկէլ աղա, որ տակաւ լեռն ի վար գլտորոզ ձիւնագնդակին պէս երթալով հետը ունեցած բազմութիւնը Յոբ նահապետինը դարձած էր, պահ մը կնոջը քով մօտենալով կըսէ,

— Կընիկ, սանկ մէյ մը կայնէ, խելքդ տուն բեր, երկուք մը թոթուրուէ աէ ինքիզինքդ վար դիր, Յուսէփ գեղեցիկին քիւհըրը պիւէ ըլլայ նէ չի կընար կշտացունէր աս խրոլըղանը, ևկուր մենք պիչիմով մը սըվըշը դենք տէ ո՛ւր պիտի երթանք նէ երթանք, զէրէ կէմի եիւքիւնիւ ալտը ...

— Քա ճանըմ, չըլլալիք բաներ կըսես մարդ Աստուծու, բիւս բիւթիւնէ ըռէզիւթիւն է ... չօզ չէյ ... ասոնք սոխախը մնալու չէին ...

— Էյ բէք աղէկ, ո՛ւր միտքդ խուռմիշես ըրէր քի խածեր կը տանիս կոր ...

— Մենք ուր, անոնք ալ հոն, կայնէ մէյ մը փորերնիս կշտացունենք ...

Այս միջոցին երկու միւսիւններ օծիքնին վեր դարցուցած և խոնաւութենէն ալ բոխօս արկօնօ հէքչուններ տեղալէն այս քօմիք խուսքին կը մօտենան։

— Օ հօ ... աս աղէկ հանդիպեցաւ, դո՛ւք ալ մնացիք ... կըսէ մին խնդալէն մարմըրելով ...

— Հապա ... Աստուած իս կը սիրէ եղէր քի ասանկ իրենկունով հետերնիդ գանուիմ տէ ձեզ զապդ ընեմ ... կըսէ տիկին Սըրբուհի։

— Օ հէ ... օրիորդն ալ հետ է եղէր կը ձայնէ միւս ընկերը ձեռքերը չփելով ...

— Մէրկէլ հայրիկն ալ հետ է, խօսք կառնէ Մէրկէլ աղա խիստ չեշտ մը դնելով խօսուածքին մէջ, հայտէ նայինք քալեցէք, դուք ալ միւսիւններ էկէր խըսքմի տուն պիտի երթաք նէ, թէզ ըրէք կը պառկին, չէ օթէլ պիտի երթաք նէ տեղ չի մնար օղլո՛ւմ ...

— Ա՛ ... օ հէ ... դուք մեզ այդքան անկիրթ գիտցաք, Տիկինները, օրիորդը միշակ ձգենք առանց քալալիի և հեռանանք... *jamais de la vie* ...

— Հախ ունին չօծօխները, անտիկ է ես, ասանկ իրենկունով մարդս մարդով է, մեղի

հետ ըլլան քի սիրտերնիս ըռահաթ ըլլայ, կէսէ երկու ծան են մեղայ ... կը ձայնէ Տրկին Սրբուհի:

— Կընիկ, ոտքս ծառքս կը դողայ կոր, ֆէրահաթ եկուր միսաֆիր բէրվէրութենէ քա ... մէյմը սանկ էթուաֆդ նայէ քի քանի հոգի եղան, տահա մարդ կայ նէ բէշիդ տիպը առ կոռչկայ նստէ ...

— Քա ճանըմ, կիրկդ չեն ելլար կոր ետ, չօգ չէյ ... թող երթան գան, ծան ծանի կուտանք, աս ալ ասանկ իրիկուն մըն է ...

— Անոթի եմ քա, խելքս կը դառնայ կոր ...

— Տահա աղէկ, հիմա կերթանք տեղ մը կը նստինք ճիւղալիւ չիւ հաց մը կուտենք, չըլլար ...

— Քա ինչ կը բանիս կոր, աս տիպը պաց հէրիֆները սինի պէզի պէս թոթուելու ըլլաւ նէ՝ չորս մէթալիք չիյնար ճէպերնուն, ո՞վ պիտի կշտացունէ աս սիւրիւն ...

— Աստուած ... զօրքին մեռնիմ ... անօթի չենք մնար ...

— Վրադ ըռզակ կայ ...

— Թամամ, ելլամ թախընմիշ ըլլամ քի աչըրմիշ ընեն ...

— Եսպանճի չէ, ես պիտի աչըրմիշ ընեմ քի լօքանթաճիին տամ, ղէրէ սանկ կը նայիմ կոր նէ խելքիս գարար կուգայ կոր ...

— Ինծի նայէ, քեզի հազար հեղ ըսի քի Զատիկ Ծնունդի խըսրմենքունու տունը գնայ երեւայ տէյի, նայէ ասանկ իրիկունով չիտակ հոն կիյնայինք ...

Մինչ օրը և կին այսպէս կուտային կառնէին, ասդին մութին մէջ զոյգ երիտասարդները միւս կիներուն և օրիորդին հետ կը տեսակցէին:

— Ետիդ նայէ, դուն տուն իյնանք կըսես կոր, անոնք իրարու վրայ կիյնան կոր... կըսէ Մէրկէլ աղա աչքերը խոշոր խոշոր բացած:

— Աս տեղը Պէյօղլու է, ամէն մարդ կուշտ աչք կըլլայ..., հէմ ինծի նայէ, թող երթան հետ գան քի մասրաֆդ հաֆիֆնայ...

— Կընիկ, սկամպիլի թուղթի պէս սըրավարտի վրաս պիտի իյնան, ետքը խախք պիտի ըլլանք ...

— Ամա՛ն ... երկնցուցիր Մէրկէլ աղա... նա, կուգես նէ ավրած չէյրէկիս խուսուր մանտրուքը կայ, տամ ծանդ կտրէ ...

— Կարծեմ չէք ճաշած, կըսէ երիտասարդներէն մին, որ խղոտ պատառներ դրտած ըլլալուն՝ դիւահարի մը պէս կը խնդար փողոցին մէջտեղը ...

— Քա հապա, ներսիդինիս ողջում կուտայ կոր ... խօսք կառնէ տիկին Զապէլ ...

— Էյ հայտեցէք չօճօխներ եղաւ ըլլալիք, պարէ փորերնիս ալ կշտացունենք տէ ետքէն հէլպէթ մէյմէկ տեղ կը գտնանք գլոխնիս խօթելու ...

— Քա աղջիկներ, սըտեղը տալոջս տունը կայ, հայտէ ֆարազա պառկելու չէ եմ ... սանկ սըղընմիշ ըլլալու համար կերթանք ամա, անկաճդ բեր, աստար պողազին կէնճը չի կրնար հասնիր, սըտեղը մէյմէկ լօխմա բան ուտենք նէ, ես բիւթիւնդ ալ հոն սըղընտըրմիշ կընեմ կըսէ տիկին Զապէլ, հէ նէվրիկ ...

— Հապա, բէլըռններնիս կլոխնիս կը քաշենք մէյմէկ պուճախ կերկննանք ...

— Էյ հայտէ անանկ է նէ Մէրկէլ աղա, տեղ մը տար տէ խալաֆաթլանմիշ ըլլանք, կըսէ տիկին Սրբուհի ամուսնոյն, մէջերնիս էրիկմարդը դուն ես ...

— Իրաւ քի մինչեւ աս գիշերուն սահաթը երկուք ու կէսը էրիկմարդ էի ամա, հիմա պիտէն պիտէ աս պապալիյտութիւնը խայիպ ըրի ...

— Տէր ողորմեայ Մէրկէլ աղա, ատ ինչ խոսք է, Աստուած սիրտիդ կէօրէ առայ, մենք գիտենք քի աղէկէն աղէկը մեղի լայլիս կը տեսնաս, թապիյէթդ անանկ է ամա, ինչ կայ նէ ան պիտի ուտենք ... կըսէ տիկին Զապէլ:

— Ներեցէք Մէրկէլիոս աղա, կըսէ միւսին, եթէ կը թողատրէք, կամ եթէ հաճութիւն կուտաք, և կամ ուրիշ բառով, եթէ ձեր արժանապատուութեան դպած չեմ ըլլար, այո՛, այն պարագային պիտի խնդրէի որ ...

— Ինծի նայէ միւսիւ, Աստուած ողորմի հոգուն Պէրպէրեանը մեռնելէն պէրի ասանկ ճառ մը մտիկ ըրած չունէի, ֆախաթ աս ըուսին գիշերին գործը չէ ողլում, մենք

հիմա երթանք տէ, դուք ալ ձեր գլխուն ճարը տեսէք կըսէ Մէրկէլ աղան, որուն արիւնը գանկէն դուրս պոռթկալուն բան մը չէր մնացեր:

— Բա ճանրմ, տղաքը հէլպէթ չնորհքով թէմիզ տեղ մը գիտեն, ձգէ քի մեղ տանին տէ խուրսախնիս կտորճիկ մը պան թխենք, խօսք կառնէ տիկին Սրբուհի:

— Հրամանեցէք, ես չէի ըսողը, ֆախաթ եաքի ըռէզալէթին քէֆիլ չեմ գիտցած ըլլաւ ...

— Հայտեցէք աղջիկներ, մէյմէկ լոխմա պան ուտենք, միւսիւնները մեզի լօգանթա մը պիտի տանին եղէր ... կըսէ տիկին Սրբուհի:

— Էյ աս եղաւ մի եմ, խաչոր չի վայլեր, կըսէ տիկին Զապէլ ... առաջ անցնելով ...

— Իրաւ քի աս ըլլալուկան պան չէր, կըսէ իր կարգին տիկին Զիւֆիւեար, բէշերը վեր սոթթելով և առըմ նետելով:

— Եանի մենծ մարդկութին էր Մէրկէլ աղային ըրածը, խօսք կառնեն միւս երկու հիւր կիները, և բոլորը մէկ ճամբայ կիյնան դէպի ճաշարան, զոյգ միւսիւններուն առաջնորդութեամբ:

Ռեսթորան ժօռօք գիտէք, կամ ճաշած էք հող: Եթէ ձենէ քիչերը չեն գիտեր, սակայն վստահ եմ թէ ամէն անոնք, որոնք քսան զրուշով Բերա հովառտայութեան կերթան, անոնք՝ որոնք հինգնոցով քսան և չորս ժամուան բան ամբարել կուզեն, և վերջապէս ամէն անոնք՝ որոնք ճաշին իրր աղանդէր մէկ երկու առքիսք վայելելու փափաք ունին, ահա այդ ճաշարանը մէկ հատիկ է պէտք է ըսել: Մեր միւսիւնները՝ որոնք ատոր յաճախորդներն էին, չիտակ հող կառաջնորդեն այս օսալար ամբարը, որոնց ետեւէն կուգար Մէրկէլ աղան:

— Պոն սուառ միւսէօ ժօռօ ...

— Օ' ... պոնսուառ մէսիէօ, մէ նու նաւօն բա թուրթ սօռթ տը մէ ...

— Սանըֆէռիէն մօն ամի, հրամանեցէք, ըսելով՝ սալօնին մէջտեղը դրուած երկայն սեղանը ամբողջովին կը գրաւէն:

— Օ'իս ... կոնակս տաքցաւ նէ' ...

— Էյ ապրիք տղաք, աս ինչ աղուոր տեղ պերիք մեզի ...

— Շատ ապրիք միւսիւններ քի սէպէպ եղաք տէ տիպերնիս իսկէրմի տեսաւ ...

— Հրամանեցէք Մէրկէլ աղա, սանկ զըլուխը անցէք ...

— Նստեցէք, նստեցէք, հէլպէթ տեղ մըն ալ ես կը գտնամ ... ըսելով Մէրկէլ աղա չորս դին կը նայի, ուր շանթէօզներ ուրախ դուարթ իրենց ընկերներուն հետ կը ճաշէին ...

— Ինծի կուգայ քի աս շարխաճի ֆիստանճի աղջիկներուն լօքանթան է, կըսէ տիկին Սրբուհի ...

— Ասոնք առթիւսթներ են տիկին, թատրոնի դերասանուհիներ, որոնք միշտ հոս կը ճաշէն ...

— Բա չեւան ուղղունսուզ կնիկներ ըլլան տէ, տեսնողն ալ մեզի ալ անանկ գիտնայ, հէ', Մէրկէլ աղա, ինչ կըսես ...

— Մէրկէլը չէ հիմա դիմացինըդ կնիկ, անոր խոթթլաթը ...

— Տէ, կէնէ քիթէ բերնէ մի բերէր, սուոր սըտեղը տաք կերակուր մը պիտի ուտենք ըսելով՝ անձեռոցը վիզը կանցնէ և բոլորը մէկ կսպասեն ճաշացուցակին ընթերցմանը:

— Եթէ կը հաճիք՝ կարդամ ձեզի կերակուրներուն տեսակը, կըսէ միւսիւններէն մին:

— Էյ հայտէ կարդայ նայինք:

— Քօնսուկ բաք ս'իքալի ..., ոօնիօն սօքի օ մասէն ..., պիքօֆ ալա ոիւս, Ֆոիֆասէ սր վօլայ ...

— Հա', ինծի ատ քեասէով չորպան թող բերէ քի բորս բսորս տաքնայ կըսէ տիկին Սրբուհի, Մէրկէլ աղա դուն ալ խմէ ...

— Ներեցէք քեասէ չէ, Ֆոիֆասէ ..., օսլիք ա լիւայ Ֆիմ, ֆիւլօք սը վօ ալա ֆօֆօք:

— Ատ նասըլ կերակուր է քի ...

— Մսեղէն է, սքանչելի կըլլայ ...

— Մսեղէնը հասկցանք ամա, թէրճիւմէ ըրէ նայինք, միսին ո՞ր սօյն է ...

— Ինչպէս ըսեմ, քիչ մը բաց պիտի իյնայ ... կըսէ միւսին ...

— Տէր ողորմեայ, ատոր հայէվարը չի գա՞յ քի ...

— Յորթ — անդրալարաթիք, բողաճեւ ...

— Ամա, զաթը ներս մտայ չի մտայ:

հասկացայ քի աստեղը մեր գիտցած տեղը չէ տէյի ... Կէէք քա աղջիկներ, Կէէք կերա- կուրէն պէլլի եղաւ կանուած տեղերնիս ...

— Ներեցէք տիկին, կերակուրին անուան էր որ թարգմանեցի ...

— Էյ ֆարազա ատոր պաշխան ալ կընային ըսէր՝ խըզարթմա, պուղլամա, խարամա, սալցալը չիչ ... կըսէ տիկին Սրբուհի կաս կարմիր եղած ...

— Ներեցէք որ շարունակեմ ... բըթի բուա օ պէօն, շու ֆլէօն ֆաուսի ...

— Իշտէ ֆարսի, աճէմ բիլաւի պիտի ըլ- լայ զահէր, ինչ կըսէք չօճուխներ ...

— Շիտակը կուգես նէ մինչեւ հիմա հիչ բան մըն ալ չի հասկցայ, թիւուիւ մանճա մը ըլլար տաք տաք ներս նետէինք իշտէ պու, կըսէ տիկին Զապէլ, մէկ կողմէն չոր հացին պատառը թխելով ...

— Դուն ինչ պիտի ուտես Մէրկէլ աղա, կը հարցնէ կինը ...

— Դուք ձեզ նայեցէք, իմ ուտելիք ա- պուրս ետքը կը մոմտանք, դուք մէյմէկ բան ապսպրեցէք տէ իմ խօլայ է ...

— Էյ անանկ է նէ մէյմէկ թապտիս միս ըսէ տէ նայինք ետքէն ինչ կուտենք կը ձայնէ տիկին Սրբուհի, որ ամէնուն մէջէն է՛ն համարձակն էր:

— Քա վայ մեղքիս, պահքի առջի ի- րինկունով միս ... կըսէ կին մը չըթունք- ները խածնելով ...

— Աս ալ ասանկ իրինկուն մըն է, զաթը չիլէ կը քաշենք կոր, մէյ մըն ալ քնատու- թիւննուս վրայ ֆասուլեան ալ ուտենք, թամամ ...

Երիտասարդ միւսին, որ օրիորդին մօտը նստած էր, կառածը կանչելով մէյմէկ տե- սակ կերակուր կապսպրէ և ինքը կսկսի խօ- սակցիլ օրիորդին հետ:

Մէրկէլ աղա, որ կնոջը մօտը նստած էր խօսք կառնէ,

— Ինծի նայէ կընիկ, տա գիւպպէին ը- սէ ապուրը փչելով ուտէ, կաւրուի ...

— Քա նասըլ ապուր, հէրիֆը միս կու- տէ կոր ...

— Կերածը ապուր է, միսն ալ վրայէն պիտի ուտէ ամա, պիտի աւրուի ...

— Աման Մէրկէլ աղա, ինչեր կըսես քի չեմ հասկնար կոր ...

— Միանձիի պէս կը հասկնաս ամա, գոր- ծիգ չիգար կոր, առջեւի միսը ձգէր ... քովի բիլիճին ծառք կը զարնէ կոր ...

— Կոլոշկան հոն է, հոգդ մընէր, չայ- լախին խաբարմիչ չեմ ընէր ...

— Դուն անանկ գիտես, մէյմը աղջկանը սուռաթը նայէ կաս կարմիր եղաւ ...

— Պաղէն տաքը մտաւ ան է, արեւը սիրեմ, ըռէնկի է չօճուխս ...

— Կընիկ տակէն էլ բէշրէֆի կընեն կոր, ետքէն ալ ուսուլի ճուռճինայով ֆասըլը պի- տի լինցունեն ...

— Է՛յ, քեզ մտիկ ընելու չեմ Մէրկէլ աղա, ա՛ ... զաթը քիչ է քաշածս, մէյ մըն ալ դուն քովս ի վեր ալթըն էվէլ կուգաս կոր ... ըսելով բերուած կերակուրը կսկսի ու- տել, ինչպէս նաեւ միւսները:

Ամէնուն մօտը դրուած պզտիկ չիշերով գինին կը խմեն և կէս ժամուան մէջ ամէ- նուն աչքերը վառլտիկ կսկսի:

— Ինծի նայէ Մէրկէլ աղա, ամէն իժիր բուս չըլլար, նայէ կընիկ հալոլնիս խաֆա- ները բռնեցինք ... հայտէ նայիմ ... խըմէ գինիդ ...

— Կընիկ, սուֆուայէն ելլանք նէ վերի մեր օտան քաշուելու չենք խապա՛ր ես ...

— Ի՛նչ ըլլայ ըլլայ, ես ծարերը թող տուի ...:

Ու բոլորը մէկ այնպիսի արտառոյուլթիւն- ներու կը մատնուին որ, Մէրկէլ աղա խիպէն աթուռներուն տակը մոռնալու կըլլայ ալ:

Ճաշէն վերջ միւսիւնները մէկ մէկ պատ- բուակաւ կըծիկը կը դնեն, ձգելով Մէրկէլ աղան թէք խոռոզ, չըջապատուած հինգ վեց հաւերէ, որոնք խմած գինիներնուն ազ- դեցութեան տակ կտկտա՛ք ... կը պոռային:

Ատենը ուչ է ալ. գրեթէ ժամը գիշե- բուան չորսն է, երբ ճաշարանապետը իրեն յատուկ քաղաքավարութեամբ կիմացնէ թէ դռները պիտի գոցէ այլեւս:

Խեղճ Մէրկէլ աղան, տան վարձքին հա- մար պահած անգլիական ոսկին, որ քուռչի կտորի մը մէջ փաթթած էր՝ կը յանձնէ մար- դուն, որ հինգ հինգ դրուէն հաշիւը կը տեսնայ և մնացորդը կը բերէ յանձնել իրեն:

— Հիմա՛ ինչ պիտի ընէք նայինք, տէ հրամայեցէ՛ք նայինք ... կըսէ կիներուն, ո-

րոնց գլխարկները մէկ կողմ դացած, աչքերն շէշին դուռը կէլա կը նետէին ...

— Ինչ պիտի ըլլայ, հոգերնիդ պիլէ յընէք, կըսէ տիկին Չապէլ, որ է՛ն շէնն էր մէջերնին, ինտոր քի ըսի նէ անանկ, քալեցէք մերիններուն տուն ...

— Միւսիւնները ո՛ւր են, կը ձայնեն միւսները ...

— Միւշտէրիի գացին միւշտէրիի ... կը ձայնէ Մէրկէլ աղա սրտենդած ...

— Քա չէ՛ ... ո՞վ գիտէ տակ չի մնան տէյի պէլքի առապա պունել գացին ...

— Դացին ամա, առապան չէ, ճատտէն պունել գացին, սէ՛րսէմներ...աս Պէյօղուին զանցան անանկ է, խառղայի պէս անցնողներու տէօքիւնթիւովը բոր կը կշտացնեն ասպնկ զիւպպէները ...

Ու մինչ բոլորը մէկ դուռնէն դուրս կելլային, յանկարծ տիկիններուն մին ինքզինքին գալով,

— Քա կայնեցէք նայինք, աղջիկս ո՛ւր է ...

— Հէ՛ ... քա հի՛մա հոս էր նէ կը ձայնեն մէկ բերան ...

— Էյ թամամ ... ծունը գլխուս, քա ետալրուս ...

— Հիմակուան եանքէսէճիները, բարա չանթասի աչըրմիչ չեն ընէր կոր ... Կրամմեցի՛ր հիմա, կըսէ Մէրկէլ աղան դող ելած չեշտով մը:

— Քա աղջիկս քա, ետալրուս ...

— Կայնէ նայինք ճանրմ, ներսը չըլլայ...

— Մենք բուսուլա չունինք ամա, ան միւսիւնները վարպետ խապտան են, ինչ տար քի աչկ աչկի չերեւար կոր նէ, անոնք բուսուլայով տեղը կը գտնան ...

— Քա ճանրմ դող կելլամ կոր քա նուսիցաս ... չամաչիր ալ փոխած չէր ...

Հագիւ թէ փողոցին անկիւնը կը դառնան, յանկարծ հող կը գտնեն օրիորդը, որուն երկու թեւերէն կը քաշքուտէին զոյգ միւսիւնները:

— Աֆէրիմ քա, հիմա օսկոռներդ կուտըրտեմ, կըսէ մայրը, խմած գինին քիթէն դուրս տալով ...

— Ինչ ընեմ տուտու, կտորճիկ մը խելքըս դառցաւ նէ հավա առնել տանք ըսին

իս դուրս հանեցին, ամա եօ կէնէ պիտի դառնայի ...

— Կոռպէկու ելլաս բիճ մը քեզի ... քի ինծի դողերու պերիբ ...

— Վա՛խ վա՛խ վա՛խ, սա նայէ, պիբ վարտուն իքի գաբտանը օլուրսա օ վարտ պաթար կըսեն, իշտէ երկու խաբտան ըլլալնուն մէկ ֆիլիքան չի կրցին տանելու կըսէ Մէրկէլ աղան քիթին տակէն խնդալով ...:

Այսպէս ամէնուն սիրտը հանգստանալով՝ բոլորը մէկ կուղղուին դէպի տիկին Չապէլի ազգականին տունը, ուր դուռը կը դարնեն, վերէն գլուխը ուսկուֆալը ծերուկ մը պատուհանը բանալով:

— Աֆ կընէք, մասխառա խապուլ չենք ըներ կոր, ըսելով՝ պատուհանը կը գոցէ ներս կը քաշուի ...:

Ինչ ըրին, ինչ եղան եղան արդեօք...:

ԼԻԼԱ



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՌԱՄՍԵԱՅՆ

ԴԻՆ 5 ՂՐՈՒՇ

Առանց անդրադառնալու պաշտօնակցական անցուկ ու մոռցուկ ըսի-ըսաւներու, անկողմնակալ ոգւով, սկզբամբ, կուգանք շնոհաւորել մեր իզմիրի պաշտօնակիցը՝ Արեւելեան Մամուլ, որ գեղեցիկ գաղափարը յղացած է իր ընթերցողներուն հրամցնելու Եռամսեայ խնամոտ պրակ մը՝ համակ գրական, իր տեսակին մէջ առաջին որ յաջողութեան և գովեստի պսակին կարժանանայ:

«Ա. Մամուլ»ի Տէր-Տնօրէնը Մամուրեան Որդի, լաւ կընէ սակայն, եթէ կողքին էլիսէն փոխէ իր Եռամսեաներուն, ինչպէս սովոր են ընել Պոլսոյ պարբերականներէն ոմանք՝ իրենց բացառիկ թիւերուն առթիւ:

Իբր անկողմնամալ պաշտօնակից, կը շնորհաւորենք այս բաղմապահանջ ձեռնարկը և յաջողութիւն կը մաղթենք:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Պիսերուն հետ գաղափարներն ալ, միտքն ալ, սիրտն ալ, ինչպէս նաեւ իտէալը բարձր ու վեր միւսին. վերջապէս որոշեց ամուսնանալ: Ձրոյցի մը նաշելով, քսան և չորս բռնայանգ առաջարկեք է քանիսաներուն, որոնցմէ էն յաջողին պիտի տայ իր ձեռքը... առ նուազն հինգ հարիւր ոսկին գանձելու համար: (Այս նիւթը՝ հիւթը պիտի ըլլայ յաջորդ յօդուածիս որ... հօթը օրէն պիտի կարդաք Ծ. Լ.):

ՆՈՅՆ. — Հոս կարգ մը երիտասարդներ, իրենց տոհմիկ շրջանակին մէջ, իրենց ուղած ժամանցը չը կրնալով գտնել, որոշած են յունարէն սովորի և քիչ մալ այդ լեզուին ներկայացուցիչներուն հետ իյնալ ելլել: (Խեղճ Չօլագիտես որ անպտուղ մեռար Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐ. — Սաքաեան կտակը խաւարէն ի լոյս... անելու ձայները կըտակ կըտակ կըտ կըտ կըտակ լսելի էին թէեւ, սակայն ատենէ մը ի վեր այդ ձայներն ալ կտրեցան: (Անգամ մը փլմեսը նայեցէք թէ՛ ոսկի հաւիթը բռնկալն է թէ բանկար Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Աղքատախնամին հանած առնուվո դեղագիրը Պոլսոյ ոչ մէկ դեղագործ չկրնալով պատրաստել, Պարտիզակ, Եալովա և Գուրտպէլէն ղրկուեցաւ, ուրկէ կսպասուի այս օր վաղը պարունակեալ նեկսարին:

ԲԵՐԱ. — Քառաձայն խումբին նորընտիր անդամներուն խստիւ արգելուած է՝ երեկոյին ժամը մէկէն վերջ փողոց ելլել, բարձրաձայն խօսիլ և ըմպելի գործածել: (Ուրուֆի չիչէներու պէս բամպակներու մէջ առնեքնէ ինչպէս կըլլայ Ծ. Խ.):

ՍԱՄԱԹԻԱ. — Վերջին թռչնին յաճախորդներէն կը խնդրուի լեմոն իսկիլեսիի իւրը թօթափելու մտօք պատուհանները չը բանան նստողները սաթլիճանէն փրկելու համար:

ՂԱԼԱԹԻԱ. — Անցեալ Հինգշաբթի Արևազալին եկեղեցին գտնուող մայր մը, երբ աղջկանը խամէթը բացուելուն համար կաղօթէր բազկատարած, լուսարարը որ հոն էր կեցած, թեւէն մտած՝ վեր է առած, խեղճ կնկանը քունն էր տարած: (Այս կրնալ սիրտը ելած, տեսիլք էր այս չէ թէ երաճ...: Ծ. Խ.):

ՈՒՐԻՇՆԵՐԸ ԻՆՉ ՈՐ ԱՆ ԸՍԵՆ

Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏՈՒՆԸ միակն է ուր կրնաք վստահօրէն դիմել, ձեր բոլոր գրեական պէտքերը հայթայթելու համար: Չագմագճըլարի այս հանրածանօթ Գրատունը չգոհանալով իր արդէն վայելած համբաւով, միշտ հետամուտ է ուշագրաւ նորութիւններով ճոխացնելու իր արդէն ճոխ գրացանկը:

Արդեօք անգաղտնապահութիւն մը ըրած կ'ըլլանք, գոնէ քանի մը հատ յիշելով իր նոր հրատարակութիւններէն, որոնք յաջորդաբար հրապարակ կ'ելլեն. —

Ա. Տէր Է. Տիկին Հ. Է. Զ. Ասատուրի Քերականութեան ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳԻՐԲԸ:

Բ. Յրանգերեք ինն իմով սորվելու նորագոյն և դիւրբուսոյց շարքի մը Ա. հատորը: (Le Français. — Cours complet pour l'enseignement direct de la langue française):

Գ. Տ. Եղիեք Եպս. Գուրեանի ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ (Գրարարի լաւագոյն Քերականութիւնը):

Դ. ԵՐԿՐՈՐԻ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ (Տանկախօս վայրերու համար):

Ե. ԻՐ ԸՆԴԱՐՁԱԿ ԳՐԱՅԱՆԿԸ, որուն այնքան անհամբերութեամբ կը սպասուէր:

Թուրքերէն, Յրանգերէն, Անգլիերէն և Գերմաներէն գիրքերու համար ալ կրնաք նոյնչափ ապահովութեամբ դիմել Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏՈՒՆԸ, որ նաև միակ կեդրոնացեղին է Իզմիրի Տէսեեան տպարանի հանրածանօթ հրատարակութեանց սակաւաքիւ օրինակներուն — Վիքթոր Հիւկոյի, Լամարթիի, Ալեքսանդր Տիւմայի եւլ. գործերուն: Պոլսոյ մէջ ո՛չ մէկ գրավաճառ պիտի կրնայ այդ հազուագիւտ գրքերը հայթայթել նոյնչափ դիւրամատչելի պայմաններով որչափ Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏՈՒՆԸ:

ԾԱՆՈԹ. — Պետրոս Կարապետեանի Հայ-Մամ, Մեծ բառարանին միակ կեդրոնատեղին է Պալենյ Գրատունը: Դին՝ 35 Ղըշ. Թըշ-Թատարի ծախքով՝ 40 Ղըշ:

Արտատպարար ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Գ ԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆՆՈՅՐԱԾՈՒԹՅԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՁԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համաւ, Թօփաշեան խան
Սոյն վաճառատունը, որ տարին երէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկունութեամբ և գիններու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց բեղուններու
և տղայոց շիք և դիմացկուն փոքրիկ
ներու ճոխ միտերք մը պատրաստ ունի,
որ յերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—25



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵԾԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍՏԱՆԻԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սիյանէ,
Ջիկաստանէ, Հնդկաստանէ, Ճապէ եւ Ճա
րոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կը
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտոյն ու համովը:

Փնտուեցէք մանաւանդ իրենց յա
տուկ խառնուրդները, որք կը ծախ
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ՃՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՄՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համաւ տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համաւ	» 54 »	»	27 ի»
Արսասահման	» 12 ֆր.	»	6 ֆր.

Կ Ա Ն Խ Ի Կ

ՀԱՍՑԷՔ

ՁԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասսէսի Ասատուեան տպարան թիւ 52.

Գաւառներու մէջ գործադրներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Իրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտաքոսթով և կամ բոսթայի փուլով 20 հաւաք
20 զրուշի հաշուով:

ՊԱՀՔ

Ամենքնիս ալ պահք բռնելու ետեւէ՝ ենք, ասիկա կը հարցնենք մինք մեղի. բայց քիչ մը մտածելէ ետքը, նորէն մինք մեղի կը պատասխանենք թէ՛ ո՛չ, մենք պահք բռնելու ետեւէ չենք, քանի որ, չենք կարգար Թ. Գրքնանի ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ ներք, թէ՛ առաւօտեան և թէ՛ Ս. Պատարագի, որոնք երգելով է որ Մեծ Պահքը մեծ համբերութիւնով չկրնանք անցընել և այս միակ գիրքն է որ կրնայ կորուսեալ հոգիները փրկութեան մէջ առաջնորդել: Գրքնան գրատունը ամէն Հայ Առաքելական դասակներու տրամադրութեանը տակ դրած է այս հոգեւորագ գիրքը՝ Ի գին... 60 փարայ: Կեդրոնատեղին՝ Չագմագճըլար Գրքնան Գրատունը՝ թիւ 25:

Սոյն գրատունը նաեւ 1907ի՝ եւ 908ի Հանրագիտակի բացառիկ թիւերուն միակ կեդրոնատեղին է:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՄԱՏԱՄ ՃԱՆԻԿ ՔԵՍՃԵԱՆ

3 Պահք-գաբու թիւ 3

Սոյն վաճառատան մէջ պիտի կըրնաք գտնել այն ամէն չիք, տոկուն և աժան առարկայները, որոնք թօհաֆիլէի մաս կը կազմեն: Անգամ մը այցելելը համեզում պիտի կրնայ գոյացնել թէ ուրիշ ո՛ր եւ է տեղ չպիտի կըրնաք գտնել նոյնքան ճոխ մթերք մը այն բնառուած Երթիքօլօին վրայ:

10—9

ԳԱՌՆԻԿ ԲԵԺԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօլիան իթւ 2

Նախ փորձառուները, յետոյ խաբուողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, գտնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ... աժան:

Դառնիկ Գէշիչեան վաճառատունը թօհաֆիլէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկներ, ձեռնոցներ, փողկապներ, բրդեղեններ, Ֆիլիֆու և խիստ ճաշակաւոր ներգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւ ֆուսէներ ևլն. ևլն.

Ջերմապէս կը յանձարարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, որկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ զինքնու աժանութեան, ճեսակի ազնուութեան և ապրանց տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր է տեղ կարելի չէ գտնել:

ԲԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔ

Արդի Հայերէնի լաւագոյն առաջնորդները

1. — Տարրական Բերականութիւն արդի Հայերէնի, նոր ոճով 2 դրուչ.
2. — Լրացուցիչ (Տարրական կարգերու շահեկան գիրք) 3 դրուչ.
3. — Նոր Բերականութիւն (գործնական եւ ճեսական) 4 դրուչ.

Ամէն ուսուցիչ այս գիրքերով կրնայ դատալ. — ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ ԱՆՎՐԷՊ Է:

Դիմել՝ 47 Պապր-Ալի հասէսի, որ կեդրոնատեղին է Դաւթեան հրատարակութիւններուն: